

## ՔՐԻՍՏՈՍԻ ՀԵՏՔԱՎ

Գլ. Գ.

Հետեւեալ կիւրակի Մէկսուէլի եկեղեցին աւելի ևս  
լիքն էր և ժամաւորները աւելի լուրջ կերպարանք ունեին։  
Պառտոր Մէկսուէլ ամբողջովին բռնուած էր աղօթքի  
զգացումով և նորա ազօթքի ջերմութիւնը զմայլեցուցիչ  
ազգեցութիւն էր անում ժողովրդի վրայ։

Ժամից յետոյ Հենրի Մէկսուէլ խմբեց խմբի ան-  
դամներին հաւաքուել դարձեալ խորհրդակցութեան հա-  
մար, նաև այն անձանց, որոնք կը կամենային միանալ  
այդ խմբին։

Երբ նա ներս մտաւ, ընթերցարանը արդէն լիքն էր։  
Այս անդամ հաւաքուել էին շատ երիտասարդներ, Մէկսուէլ  
առանձին սիրով վերաբերուեց այդ նոր հիւրերին։

—Իմ երիտասարդ բարեկամներ, —ասաց նրանց պաս-  
տուը, —ի սրտէ ուրախ եմ ձնզ այստեղ տեսնելուս համար։  
Զեր միանալը մեր ուխտին առանձնապէս գնահատելի է.  
դուք կեանքի ապագայ մշակներն էր։ Ինչ որ դուք  
մտցնէք կեանքի մէջ, նրանով էլ առաջ կը դնայ կեանքը։  
տեսէր, չինի թէ դուք աւելի պղտորէք կեանքի առանց  
այն էլ տղմոտ վտակը։ Զեր բնաւորութիւնը դեռ ևս  
կազմակերպւած չէ. ձեր հոգին փափուկ է և ենթարկ-  
ուող. երիտասարդ սիրու եռում է, ինչպէս հալած մե-  
տաղ։ Հետեւեցէք ինքներդ ձեզ։ Երբ ձուլում են զանգակը,  
հալած նիւթի վրայ աւելացնում են արծաթ, ազնիւ մե-  
տաղ։ Եւ որչափ աւելի է ածուած զանգակի մէջ ազնիւ  
մետաղ, այնչափ աւելի մաքուր, զօրեղ և հաճելի է նրա  
ձայնը։ Աշխատեցէք, որ ձեր հոգու ձայնը ամբողջ կեան-  
քում պարզ և ներդաշնակ լինի. աւելացրէք նրա վրայ  
որչափ կարելի է ազնիւ մետաղը, աւետարանական ար-  
դարութեան ու սիրոյ մաքուր լոյսը։ Երանի է ձեզ, եթէ  
կը դնաք Քրիստոսի շաւզով։ Այդ ճանապարհի վրայ ոչ մի-

բարի սերմ չէք կորցնի:

Երիտասարդ ունկնդիրները խոր զգացուած էին այդ խօսքերից: Խմբի միւս անդամները ջերմագին ողջունելով նրանց, իրենց խոստումը կատարելու կարողութիւն էին ցանկանում:

Սկսուեցաւ մտքերի փոխանակութիւն, խօսում էին անցկացած շաբաթուայ մասին, խորհրդածում էին ապագայ անելիքի մասին. Ամէնքի համար էլ դեռ շատ մուժ խնդիրներ կային:

Պարզ երևում էր, ինչքան էլ տարօրինակ լինի այդ, որ քրիստոնեայ հասարակութեան մէջ քրիստոնեայ լինել, Քրիստոսի շաւզով ընթանալ, իր գործողութիւնների մէջ բացառապէս նորա ուսմամբ առաջնորդուել՝ զարմանալի գժուար բան է եղած, մեծամեծ անյարմարութիւններով, զրկանքներով, նոյն խոկ տանջանքներով և ուրիշ կերպ մտածողների կողմից հալածանքներով շաղկապուած: Ամէնքը համաձայն էին, որ Քրիստոսի վարդապետութեան համեմատ ընթանալը առօրեայ կեանքում ամենաակարեւոր բանն է, բայց պահանջում է աւետարանական արդարութիւն և նրա ըմբռնումն, որ դեռ իրենցից շատերը չունեին:

Ժողովը փակուեց աղօթքով. ամէնքը ցրուեցին՝ հազորդելով միմեանց իրենց կրած գժուարութիւնների մասին, փոխադարձ քաջալերութիւն մնառելով. Մնացին պաստոր Մէկսուէլ և Ալեքսանդր Պաուէր՝ երկաթուղային արհեստանոցների կառավարիչը:

— Մի խնդիր ունեմ՝ ձեզ մօտ, — սիրելի պատոր, — ասաց Պաուէր. Իմ ձեռքի տակ արհեստանոցներում աշխատում են հարիւրաւոր արհեստաւորներ: Դրանք բոլորն էլ սովորած երիտասարդ մարդիկ են, մի քիչ և կարդացած, սակայն նրանք համարեան բոլորովին անտեղեակ են կեանքի գլքին, Աւետարնին: Ծանօթացը նրանց այդ գրքին, հետաքրքրեցէք նրանց Քրիստոսի աւետարանի խօսքով: Ես կարծում եմ, որ արհեստանոցների տէրեւի պարտականութիւնն է, իրենց ծառայողներին բացի լաւ

բնակարաններ, բաւարար ապրուստ մատակարարելուց, ամենից առաջ հոգեպէս բարձրացնել նրանց ես մի մեծ ծրագիր ունեմ: Դուք, սիրելի Մէկսուէլ, աւելի քան որ և է մէկը կարող էր օգնել ինձ այդ բանում: Ես պէտք է խնդրեմ ձեզ, որ վազը գաք ինձ մօտ՝ արհեստանոցները և խօսէք արհեստաւորների հետ: Դուք կարող կը լինիք աւելի մօտենալ նրանց, քան ուրիշ մէկը:

— Նատ լաւ, ես կը գամ, — պատասխանեց Մէկսուէլ:

Հետեւեալ օրը երեկոյեան գէմ նա գնաց Պառէրի գրասենեակը, որ արդէն սպասում էր նրան: Կառավարիչն ասաց.

— Քնանք, ես ցոյց կը տամ ձեզ, թէ ինչ եմ մտադիր անելու:

Նրանք անցան մեքենաների բաժանմունքը և ներս մտան մի շատ ընդարձակ սենեակ:

— Անցեալ շաբաթ իմ տուած խօստումից յետոյ, ասաց Պառէր, — զանազան ծրագիրներ եմ սկսել կազմել: Ես ուզում եմ այստեղ սեղաններ գնել, անկիւնում, որտեղ գոլորշու խողովակներն են, տեղ պատրաստել սուրճ եփելու համար: Ես կամենում եմ գործաւորներին յարմար տեղ տալ, որտեղ կարող լինին նախաճաշել. իսկ շաբաթը երկու երեք անգամ նրանց կէս ժամով շուտ կարձակեմ, որպէս զի նոքա կարողանան միմեանց հետ փոքր ինչ խօսել: Այդ մի քիչ կը քաղցրացնի նրանց կեանքը և հոգու թարմութիւն ու աշխոյժ կը տայ: Բայց դրանից գործաւորների նկատմամբ ուրիշ մտքեր ևս ունիմ, ինչ պէս առաջ ասացի ձեզ: Մեր բանւորները համեմատաբար կը թութիւն ստացած մարդիկ են. Ես հարց տուի ինձ, «Ի՞նչ կանէր նրանց համար Քրիստոս իմ տեղը»: Նա կաշխատէր բարւոքել նրանց կեանքը, ինչպէս ֆիզիքապէս, նոյնպէս և հոգեպէս: Ձշմարիտն ասած, մենք շատ քիչ ենք հոգում մեր բանւորների մասին: Մենք նրանց վրայ նայում ենք իբրև մի բանող ուժի վրայ. հետեւում ենք, որ նոքա ճշտութեամբ կատարեն իրենց գործը, իսկ թէ ինչպէս են ապրում նրանք արհեստանոցից դուրս,

ունին արդեօք իրենց կեանքի մէջ պայծառ բոպէներ, այդ արդէն մեր փոյթը չէ։ Մեր յարաբերութիւնները նրանց նկատմամբ սահմանափակւում են միմիայն գրամական հաշիւներով, առուծախով, նրանցից վերցնում ենք ժամանակ և աշխատանք, փողը վճարում և գրանից գէնը չենք անցնում։ Այն ինչ նրանք չէ որ մեր գործակիցներն են, մեղ հետ միասին մի ընդհանուր գործ են կատարում։ Մեղը է նրանց մոռանալը։ Եւ վերջապէս, ես կարծում եմ, աէրերի համար մեծ օգուտ է գործառուների կեանքի մէջ լոյս սփռելը։ Խելացի բարի խօսքը, եղբայրական անկեղծ կոչը գէպի զգաստութիւն, արդարութիւն, սէր առ Աստուած և առ մերձաւորը՝ կաղնուացնէ ծառայողների սրտերը, կաւելացնէ նրանց գէպի գործն ունեցած եռանդը, կը մօտեցնէ և բարեկամական յարաբերութիւններ կառաջացնէ գէպի տէրերը։ Տէրերն ու գործառները կը լինեն իրրե եղբայրներ, և ոչ թէ թշնամիներ, ինչպէս որ առհասարակ այժմ է լինում։ Ես մտադիր եմ ապագայում ընդարձակել իմ ծրագիրը։ Առ այժմ ես կը խնդրէի, որ գուք խօսէք բանաւորների հետ, երբ նոքա աշխատանքից կաղաստուին։ Ես կէս ժամով նոցա այստեղ կը կանչեմ։

Երբ սուլիչը հնչեց, գործառները գուրս եկան արհեստանոցներից։ Նրանք մօտաւորապէս երեք հարիւր հոգի էին։

Պառէր յայտնեց նրանց իւր ծրագլների մասին և ապա խնդրեց պաստօրին խօսելու բանաւորների հետ։ Հէնրի Մէկառէլ ասաց մօտաւորապէս հետեւալլը.

— Սիրելի բարեկամներ, գուք այստեղ գործ ունիք մեքենաների հետ։ Այն գիտութիւնը, որ ստեղծում և կառավարում է այդ մեքենաները, կոչում է մեքենայագիտութիւն, որ պահանջում է մեծ հմտութիւն, խելք և զննողութիւն։ Բայց կայ ուրիշ աւելի կարեւոր մեքենայագործութիւն, որ մեզնից աւելի ևս լուրջ մտածողութիւն, մեծ հմտութիւն ու գիտողութիւն է պահանջում։ Այդ մեր կեանքի, մեր գործողութիւնների և ընթացքի՝

մարդկային սրտի գիտութիւնն է։ Մարդու ամենակառարեալ մեքենան է երկրի վերաց նա պահանջում է ուշադիր հոգատարութիւն, մեծ խնամք իւր մասին, որպէս արտաքուստ՝ մարմնի, նոյնպէս և ներքուստ՝ հոգու պահպանութեան համար, և հոգու համար աւելի, քան մարմնի։ Պահպանեցէք այդ մեքենան, մի թողնէք, որ ժահուոտի, կեղտոտուի, անպէտքանայ։

—Դուք մեքենաների վերաբերեալ աշխատանքի համար ունէք որոշ կանոններ ու ձեռնարկներ, առաջնորդում էք որոշ ծրագրներով ու գծագրութիւններով։ Մի մոռացէք յաճախակի նայելու և ստուգելու նաև ձեր ներքին աշխատանքի ծրագիրներն ու առաջնորդող կանոնները։ Այդ ծրագիրը ամէնքիս համար յափառենական և բարձրագոյն սիրոյ ու արդարութեան խօսքն է Փրկչի վարդապետութիւնը։ Աւսումնասիրեցէք այդ ծրագիրը, նորա համեմատ կազմակերպեցէք ձեր կեանքը, և դուք կը կերպարանափոխուէք գէպի լաւը, նոր մարդ կը դառնաք, կը գտնէք մինչև այժմ անօգուտ տեղը վնտուած ձեր երջանկութիւնը, կը դառնաք կեանքի բարդ կազմութիւնը հասկացող և հարկաւոր կերպով վարող ամենակատարեալ մեքենավարներ։

Ուկնդիրները դոհ մնացին։ Դուքս գնալիս նրանք ամենայն յարգանքով գլուխ էին տալիս պաստորին։

Պառէրը ուղղակի հիացած էր նորա երեակայութեան մէջ միաւմի պատկերանում էին իւր ապագայ անելիքները բանւորների կեանքը արտաքուստ և ներքուստ բարեփոխելու համար։ Նորան երեսում էր, թէ ինչպէս բացի պաստոր Մէկուէլի քարոզներից, բանւորների համար կարդացւում են նաև դասախոսութիւններ այլ և այլ գիտական և հասարակական խնդիրների մասին։ Յայտնի պրօֆեսորներ և հասարակական գործիչներ կենդանի և գրաւիչ խօսքով մասնակից են անում բանւորներին իրենց մտքերին ու գիտութեան։ Ունկնդիրները ագահաբար լուսմ են արտասանուած ոգեսորիչ և խելացի խօսքերը. նրանց միտքը սկսում է լրջութեամբ գործել, աւելի ու

աւելի հասունանալ։ Լաւ գրքեր կարդալու սէրը հետզհետէ աճում է նրանց մէջ. շատերի մէջ զարթնում է սէր դէպի դեղարուեսող, սկսում են երգել և նուագել այլ և ոյլ գործիքների վերայ։ Երգեցիկ և երաժշտական խմբեր են կազմում, ընտանեկան համերգներ են կազմակերպում սեփական ուժերով։ Գործաւորների բարքերը գգալի կերպով մեղմանում, ազնուանում են. չկայ այլ ևս կուր, կոպիտ հայհոյանք. արբեցութիւնը վերանում է։ Տանը, ընտանիքներում կարիքը բարձուում է. երեխաները առողջ, կուշտ և մաքուր մնունդ են ստանում. նրանց համար բացւում են պատշաճաւոր դպրոցներ, որտեղ ոչ մի տաղանդ կորչում, ոչ մի ընդունակութիւն չի խեղտուում։

Այս մտածմունքներից Պառէրի հոգին փառաւորւում էր, ուրախ ժաղիտը նրա դէմքից չէր հեռանում։

— Եատ ափսոս, որ մարդիկ չեն ուզում հասկանալ, թէ որչափ պարզ է և ամենքին մատչելի ամենաբարձր և պայծառ ուրախութեան դաշտնիքը,— մտածում էր ինքն իրեն Պառէր։ — Հարկաւոր է միայն որտով մի փոքր մօտենալ մարդկանց. իսկոյն թէ ուրիշների և թէ քո սրտի մէջ ջերմութիւն է առաջանում։ Ես դեռ նոր ուզում եմ իմ բանուորների համար մի բան անել, և ահա արդէն ներքին ուրախութեամբ լցուած է սիրտաւ։

Մէկսուէլ վերադարձաւ տուն, իսկ Պառէր գնաց իւր դրասենեակը պարապելու, նորա սեղանի վրայ մի ծրար էր դրուած՝ «գրասենեակի վերատեսչին» հասցէով։ Պառէր բաց արաւ ծրարը և սկսեց կարդալ։ Բանից դուրս եկաւ, որ սիսալմամբ էր այդ ծրարը իւր ձեռքն ընկել, այն ինչ դա ուզարկուած էր հաշուապահական գրասենեակի վերատեսչին։ Այդ թղթով երկաթուզային ընկերութեան վերատեսչին ցոյց էր տրուում, թէ ինչպէս պէտք է պահել հաշիւները՝ եկամուտի ճշդրիտ թիւը ծածկելու՝ հետեապէս և աւելի քիչ հարկ վճարելու համար։

Պառէր թուղթը ձեռքից վայր ձգեց։ Ի՞նչպէս վարուէր։ Յայտնէր ուր հարկն էր և մերկացնէր գաղտնիքը. բայց այդ կընշանակէր զրկուել պաշտօնից ընդմիշտ։ Այ-

նուհետեւ ինչով պէտք է պահէր իւր ընտանիքը, որ սովոր էր ճոխ ապրուստի, ունէր յայտնի դիրք հասարակութեան մէջ։ Բայց չէ որ այդպիսի կեղծիքներ ուվորական երեսյթ էին բոլոր խոշոր ընկերութիւնների մէջ, ինչու հէնց ինքը պէտք է մերկացնէր այդ կեղծիքը։

— Այս անիծեալ թուղթը կը գնեմ նոր ծրարի մէջ, — ասաց նա ինքն իրան, — վրան կը գրեմ, «բացուած է եղել սխալմամբ» և կուղարկեմ ըստ պատկանելոյն։

— Եւ կարծում ես, որ Քրիստոս կարդարացնէր քո այդ մտադրութիւնը, — ասում էր Պառէրին ներքին մի ձայն։ — Հապա ուր մնաց քո խոստումը՝ հետեւլու Քրիստոսին, յօժարութեամբ կրելու նորա խաչը։ Ի՞նչպէս կարելի է լուութեամբ անցկացնել, երբ մի ամբողջ ընկերութիւն խախտում է օրէնքը և տարեկան մի քանի հարիւր հազարի վնաս հասցնում գանձարանին։ Այդ գողացուած դրամով կառավարութիւնը կարող էր ամեն տարի նոր հիւանդանոցներ, տասնեակ դպրոցներ, գրադարաններ և թանգարաններ բաց անել։ Իսկ այժմ այդ գրամները լցւում են մի քանի միլիոննատէրերի անյատակ գրպանները։ Կարելի է այդ գործը լուութեան տալ, առարկելով, թէ ոդա ինձ չէ վերաբերում, ես պատահաբար իմացայ, իմ մասի հաշիւները մաքուր են»։

Պառէր տատանւում էր. ի՞նչ անէր, ի՞նչպէս վարուէր, որ այս խնդրում ես Քրիստոսին հետեւած լինէր։ Նա վարանման մէջ էր, մի կողմից աւազակութիւն, կեղծիք և նրանց թագցնելը, միւս կողմից պաշտօնից զրկուելու և ընտանիքի կարօտութեան երկիւղը։

Սուլիչը հնչեց, մեքենաները յդադարեցին, բանուորաները ցրուեցին իրենց տները, իսկ Պառէր դեռ նստած էր իւր գրասենեակում։ Նա արձակեց իւր օդնականներին ու գրադիւններին, տսելով. կարող էք գնալ. ես դեռ կը մնամ այստեղ, կարեսը գործ ունիմ։

Ուշ դիշերը, եթէ մէկը գրսից նայէր դէպի նորա գրասենեակը, մի տարօրինակ պատկեր կը տեսնէր։ Պառէր ծունկ էր չոքել, ձեռքով ծածկել աչքերը. նա աղօթում էր։

Հաւում էին ծանր հառաջներ։ Վերջումը նա ասաց.

— Ինձ է ուղարկուած։ Նշանակում է, այդպէս պէտք է. թող Աստուծոյ կամքը լինի։

Պառերի գէմքը խաղաղ էր. աչքերի մէջ վճռողականութիւն էր երեսում։ Նա վերկացաւ և հաստատուն քայլերով գնաց գէպի տուն։ Նա լնտրել էր իւր ճանապարհը. պէտք է գնար Քրիստոսի հետքով։

Գլ. Դ.

Եաբաթուայ սկզբին Հռաքէլ Վինսլոու գնաց Վերջինիա Պէջի մօտ՝ գլխաւոր փողոցի վրայ գտնուած նորաշքեղ ապարանքը։

— Ես եկել եմ Զեղ մօտ, սիրելի Վերջինիա, խորհրդի, — տաց Հռաքէլը. — չգիտեմ ինչ կերպ անեմ։

— Բանը ինչո՞ւմն է։

Հռաքէլը հանեց գրպանից մի նամակ և տուեց լնակերուհուն. Նամակը «օպերայ կոմիք»ի վերատեսչից էր։ Վերատեսուչը հիացած էր Հռաքէլի ձայնով, նորան բեմական փայլուն ապագայ էր նախատեսում և հրաւիրում էր իւր խմբի մէջ մասնակցելու։ Առաջարկութիւնները հրապուրիչ էին. մի շարք առաջնակարգ գերեր և ամսական հազար ռուբլի վարձատրութիւն։

Վերջինիան կարդաց նամակը և մտածմունքի մէջ ընկաւ։

— Ի՞նչ կասէք, — հարցրեց Հռաքէլը։

— Դուք չպէտք է պահանջէք, որ ես վճռեմ ձեր փոխարէն, — պատասխանեց Վերջինիան. — Ինձ համար աւելի դժուար է, քան ձեզ համար, վճռել այդ խնդիրը։ Սակայն, ինձ թւում է, որ այստեղ յիշուած հասարակութիւնը միանգամայն պատուաւոր է. ցուցակում յիշուած գերասանները ամէնքն էլ բարի համբաւի տէր մարդիկ են. գործը նոյնպէս համակրելի է, և բացի դրանից ձեզ սպասում են փառք, ժողովրդի հիացմունք, ծափահարութիւն։

Այստեղ, համայնքի տաճարում, շատ քիչ թուսվ լսողներ ունիք, բայց միւս կողմից . . .

Վերջինիան կանգ առաւ։ Հոգէլը վրայ բերեց.

— Միւս կողմից, ուղում էր ասել, հազիւ թէ այդ յարմար գործունէութիւն լինի մեր նոր խմբի մի անդամի համար։ Ինքս ել այդպէս եմ կարծում։ Ես չեմ կարող ենթադրել, որ Քրիստոս կարդարացնէր իմ արածը, եթէ ես բեմ գուրս գայի։ Զայն ու տաղանդը ծախել, պճնուել ու դափնիներ վաստակել, փառքով արքենալ՝ այս բոլորը, ինձ թւում է, յարմար չի գալիս իմ տուած խստմանը։ Օպերայի խմբի մէջ մտնելս չէ որ միմիայն իմ շահերին պիտի ծառայի։ Ես լաւ փող կըստանամ, փառք կըփաստակեմ, բայց այդ ամէնը կըլինի ինձ համար։ Ուրիշներին ինչ արած կըլինեմ։ Չէ որ մենք պատրաստուել ենք ծառայելու մեր մերձաւորներին։ Ես կարծում եմ, որ օպերան և համերգը ստուար մեծամասնութեան համար լոկ զուարճութիւն են, մի հաճելի զրոսանք, և ամբողջ կեանքը նուիրել ժողովրդի բաւականութեան, հաճոյքին, ու միմիայն գրան՝ ստորացուցիչ կըլինի։ Կուզենայի աւելի լաւ բան արած լինել. բայց ինչ. ինչ կարող եմ անել ես իմ ձայնով. ում և ինչ բանի կարող եմ օգտակար լինել։

Այդ ժամանակ սպասաւորը յայտնեց, որ նախաճաշը պատրաստ է և աղջիկները՝ չվերջացրած իրենց խօսակցութիւնը, գնացին սեղանատուն։ Այստեղ էին արդէն վերջինիայի տատը և եղբայրը՝ Ռոլին, որ շարունակ ակմբանոցում, թատրոններում և ձիարշաւների մէջ էր անցկացնում իւր կեանքը։ Հօրից մնացած ահագին կարողութիւնը հնարաւորութիւն էր տալիս նրան պարապ կեանք վարելու յարատել և յայտնի երիտասարդների շրջանում, և նա լայն կերպով օգտաւում էր այդ հնարաւորութիւնից։

Իւր քրոջ ընկերուհին նրան շատ դուր էր գալիս և դրա համար այդ օրը մնացել էր տանը նախաճաշելու, իմանալով, որ նա իրենց մօտ կըլինի։ Նախաճաշի ժամա-

նակ առաջինը խօսեց Ռուլին, դիմելով Հռաքէլին.

— Կարծեմ, կարելի է Զեղ շնորհաւորել։ Զեր հրաշալի տաղանդը իւր արժանի գնահատութիւնն է զտնում։ Մենք ամէնքս շատ ուրախ ենք։ Ես այժմեանից հաւատացած եմ, որ մեծ յաջողութիւն կունենաք։

Հռաքէլը կարմրեց, ունքերը մի քիչ կիտեց և հարցրեց.

— Ի՞նչի մասին էք խօսում։

— Ի՞նչպէս թէ ինչի, — զարմացաւ Ռուլին։ Ամբողջ քաղաքը անհամբերութեամբ սպասում է Զեր պատասխանին։ Օպերայի վերատեսուչը բախտաւոր կը լինի։ Զեղ իւր խմբի մէջ ունենալով։

— Դուք սխալում էք, — հանդարտութեամբ պատասխանեց Հռաքէլը։ Ես չեմ մտնում այդ խմբի մէջ։

— Ի՞նչո՞ւ, — խառնուեց խօսակցութեան մէջ Վերջինիայի տատը, — վերատեսչի առաջարկութիւնը, ինչպէս ինձ պատմել են, շատ գրաւիչ է։ Դուցէ Զեղ ուրիշ էլ աւելի ձեռնտու առաջարկութիւն են արել։

— Ո՞չ. եթէ նոյն իսկ արած էլ լինէին, ես նոյնպէս կը հրաժարուէի։

— Բայց ինչո՞ւ, վերջապէս, զարմացած հարցրեց տատը։ Յոյս ունեմ, որպէս հին ծանօթների, դուք կը լիներէք մեր հետաքրքրութիւնը և կը բացատրէք Զեր մերժման պատճառները։

— Հէնց նոր այդ մասին էի խօսում Վերջինիայի հետ, — պատասխանեց Հռաքէլը, ինձ թւում է, որ եթէ Աստուած ինձ տաղանդ է պարզեել, ուրեմն ես պէտք է պատշաճաւոր արժանաւորութեամբ գործ գնեմ այն։ Բեմի վրայ ես պէտք է երգեմ բախտի սակաւ ընարեալների հաճոյքի համար (դժբախտները չեն որ թատրոն չեն յաճախում)։ Իսկ ես կը կամենայի իմ ձայնով քաղցրացնել անբախտների դառն վիշտը, թեթեացնել երգով, որչափ հնարաւոր է, թշուառ խեղճերի ծանր կեանքը։ Ես կարծում եմ, որ Քրիստոսին այդ աւելի հաճելի կը լինի։

— Ներեցէք, սիրելի Հռաքէլ, — ընդհատեց տատը, ես մի քիչ լաւ չեմ հասկանում Զեղ։

— Ի՞նչո՞ւ համար, տամի, — մէջ ընկառ Վերջինիան, Դուք հօ գիտէք պաստոր Մէկսուէլի մօտ մեր արած խոստման մասին, Եւ ահա Հռաքէլը կամենում է այդ խոստման համաձայն վարուել. Այժմ մեր ամեն մի քայլը պէտք է լաւ մտածուած ու շափուած լինի, և ես շատ լաւ եմ հասկանում Հռաքէլի դրութիւնը. Ես ինքս այժմ շատ մտածմունքների մէջ եմ:

— Դու, — հարցրեց տատը խստութեամբ: Այդ ինչ նոր մտածմունքներ են: Յոյս ունեմ, որ այդպիսի անմտութիւններ չես անի:

— Ես շատ զանազան մտածմունքներ ունիմ, հանգարասութեամբ ասաց Վերջինիան, անմիտ են՝ թէ ոչ, այդմասին վճիռ տալ չեմ ուղում, Ես դեռ բոլորովին չեմ պարզել ինձ համար իմ ապագայ կեանքի ընթացքը Ցիստոս Քրիստոսի վարդապետութեան համաձայն: Հէնց որ վերջնականապէս պարզեմ և վճռեմ անելիքս, իսկոյն և եթ դործի կը կպչեմ:

Տատը բորբոքուեց.

— Այդ ամէնը դատարկ բան է, երիտասարդութեան հրապոյր: Ես, կարծեմ, ձեր երկուսից շատ եմ ապրել աշխարհում և աւելի եմ հասկանում և ահա իմ ասեւլիքը. «Դրանից ոչ մի բան չի դուրս գայ»:

— Ի՞նչպէս թէ դատարկ բան է, ասաց Վերջինիան: Ձեր կարծիքով Քրիստոսի ուսման համեմատ ապրելը դատարկ բան է: Հապա էլ ինչո՞ւ ենք քրիստոնեայ կոչում: Քրիստոսի օրէնքը մեզ խաղի համար է տրուած, ինչ է: Կամ, գուցէ, ոիրոյ և յաւիտենական արդարութեան այդ ուսումը ուրիշների համար է, իսկ մենք մեր օրէնքները, մեր սովորութիւնները և կեանքի հիմնական սկզբունքներն ունենք: Ես չեմ հասկանում, տամի, թէ ինչպէս կարող էք դուք մեր մտադրութիւնը դատարկ բան համարել: Ինձ թւում է, որ դուք մեծերդ պէտք է մեզ խրախուսէիք: Խելօք խորհուրդներ տայիք, քաջալերէիք, այն ինչ դորա փոխարէն . . .

— Այն ինչ դորա փոխարէն ես չեմ ուղում քեզ հետ

խօսել, —ընդհատեց նրան տատը և վերկենալով դուրս եկաւ սենեակից։

—Ներեցէք, սիրելի Հռաքէլ, —ասաց նա հիւրին։ —Դուք իմ «խելօք» թոռանը մի մտիկ արէք. շուտով այդ ամէնը կանցնի, իսկ դուք ընդունեցէք առաջարկութիւնը, և մենք շուտով կը կարդանք ձեր յաջողութիւնների մասին։

Հռաքէլը այդ խօսակցութիւնից հասկացաւ, որ Վերա Ջնիայի համար հեշտ չի լինելու իւր տուած խօստումը կատարել, և անհանգստութեամբ մտածում էր, որ դրա նման մի բան էլ իրան պիտի պատահի տանը՝ այդ ինդրի առթիւ մօք հետ խօսելու ժամանակ։

Երբ Հռաքէլը գուրս եկաւ տուն գնալու, Ռուբին Պէջը ուղեկցեց նրան։ Ճանապարհին Ռուբին քաշուելով հարցրեց.

—Օրինարդ Վինսլու, ինչու համար այս վերջին ժամանակները սկսել էք առանձնապէս խիստ վերաբերուել դէպի ինձ Առաջ մենք լաւ բարեկամներ էինք, իսկ այժմ Դուք թոյլ չէք տալիս նոյն իսկ Զեզ Հռաքէլ անուանելու, պահանջում էք, որ ես Զեզ դիմելիս՝ օրինարդ Վինսլու տաեմ։

—Մենք արդէն երեխաներ չենք, —չոր կերպով պատասխանեց Հռաքէլ։ Այն ժամանակ լաւ էր, Երբ փոքր էինք, այժմ մենք մեծացել՝ փոխուել ենք։

—Զգիտեմ, Դուք ինչպէս, —շարունակեց Պէջ, —բայց ես նոյնն եմ մնացել։ Բայցի այդ, ինձ հետ միասին աճել է նաև իմ դէպի Զեզ տածած բարեկամական դդացմունքը և ես հօգուս ամբողջ զօրութեամբ կը ցանկանայի, որ մեր բարեկամական յարաբերութիւնները չփոխուեին, այլ աւելի ևս հաստատուեին։

Հռաքէլը ծիծագեց և ասաց. Ի զուր ցանկութիւն։ Դուք գիտէք այս ասացուածքը. «Ժամանակները փոխում են և նրա հետ միասին մենք ևս փոխում ենք»։

Ռուբին վիրաւորուեց.

—Դուք ի զուր հանաքի էք տալիս, օրինարդ Վինսլու։ Դէպի Զեզ ունեցած իմ դդացմունքը միանդամայն լուրջ

է։ Ես կը կամենայի իմանալ, ինչ կասէք Դուք, եթէ Ես Ձեզ առաջարկեմ իմ կինը լինելու։

—Ես կը պատասխանեմ Ձեզ, որ դուք ի զուր էք բարձրացնում այդ հարցը։ Մենք իրար հետ յարմար զոյդ չենք կազմի։

—Ի՞նչո՞ւ։

Հոաքէլը լոեց. Նա չէր ուզում խօսել, որպէս զի աւելորդ բան ասած շլինի։ Ուզին պատասխան էք ուզում։

—Ասացէք, ինչո՞ւ։ Հաւատացէք, որ աւելի մեծ վիրաւորանք այլ ես չէք հասցնի, իսկ ես գոնէ պատճառը իմացած կլինիմ։ Եւ ով գիտէ, գուցէ յաջողուի վերացնել այդ պատճառը։

—Ոչ, վերացնել չի կարելի, որովհետև պատճառը հէնց Ձեր մէջն է։ Դուք կեանքի լուրջ նպատակ չունիք։ Ես Ձեզ չեմ կարող յարգել։ Ասացէք, ինչո՞ւ էք ապրում։ Ի՞նչ էք արել կեանքի համար։ Ի՞նչ էք մտադիր անելու։ Դուք պատուաւոր ընտանիքի զաւակ էք, օւսել էք լաւագոն գոպրոցում, լսել էք ընակիր պրօֆեսօրներին, Ձեր տրամադրութեան տակ են եղել լաւ գլքեր և ձեռնարկներ։ Դուք տեսել էք գեղարուեստի լաւագոյն արտադրութիւնները, լսել էք գեղեցիկ երաժշտութիւն, տեսել էք լաւ ներկայացումներ և գերասաններ բեմի վրայ։ Ձեզ վրայ նիւթական, մտաւոր և բարոյական ահագին միջոցներ են գործ գրաւել։ Եւ այդ բոլորը ինչու համար։ Ի՞նչ օգուտ ունեցաւ։ Ի՞նչ գուրս եկաւ Ձեզնից։ Հօրից մնացած միլիոնները վատնող և Աստուծու պարգևած կեանքը փշացնող մի մարդ։ Մեր շուրջը այնքան շատ շարիք, ստորութիւն, յիմաբութիւն կայ, խաւարը այնքան շատ է։ Ամենուրեք մշակներ են հարկաւոր՝ երիտասարդ, եռանգուն, լուսաւոր ուժեր, և Դուք ձեզ տուել էք անարդանգործութեան։ Միթէ Դուք չէիք կարող պէտք գալ մի ուրիշ աւելի բարձր և արժէք ունեցող բանի, քան Ձեր գոմը, բիլիարդը և կլուբը։ Ձեր մէջ ինչը կարող է գրաւել մի լուրջ աղջկայ։

Հոաքէլը տարուած իւր խօսակցութեամբ, չէր նկա-

տել, որ արդէն հասել էին իրենց տան դռանը և որ Ռոլին կանգնած էր խղճալի, ինքն իրան կօրցրած դրութեան մէջ։ Հռաքէլի իրաքանչիւր մի խօսքը, կարծես, մտրակի պէս հարուածում էր նորան և նո շփոթուած շնչում էր։

— Այո, Դուք իրաւացի էք . . . Այդ բոլորը յիմարութիւններ և ստորութիւններ են . . . Այդ ամենը ցաւալի է, ամօթարեր է . . . Դուք իրաւոնք ո՞նիք . . . Զի կարելի յարգել . . .

Հռաքէլը զգաց, որ շատ հեռու էր գնացել և իրեն աւելի էր թոյլ տուել, քան պէտք էր։ Նա գլուխ տուեց և անկեղծօրէն, ի սրտէ «ներեցէք» ասելով՝ ներս մտաւ տուն։

Բարձրանալով վերև, իւր սենեակը, նա պատուհանի առաջ կանգնած մնաց՝ ընկղմուելով մտած մունքի մէջ,

— Ո՞վ ինձ իրաւոնք տուեց, ասում էր նա ինքն իրան,— այդպէս խիստ դատելու Ռոլին Պէջին։ Նա չունի կեանքի որոշ վսեմ նպատակ։ Բայց միթէ ես ունիմ։ Ես ինքս որ և է օգտակար բան արել եմ մարդկանց համար։ Մինչև այժմ ինչ եմ արել ես։ Ռոլինի պէս ես էլ սովորել եմ լաւագոյն պանսիօններում, որ նոյնպէս մեծ ծախս է նստել։ Իսկ ինչ եմ տուել իմ կողմից։ Եկեղեցում երդում եմ։ Պատրաստում էի բեմ դուրս գալու։ Բայց այդ ամենը չէ որ էլի ինձ համար է, իմ փառքի, իմ բաւականութեան համար։ Իսկ ուրիշների համար ոչինչ։ Պէջին զբաղեցնողը խրախճանները, թղթախաղը և ձիերն են, իսկ ինձ զբաղեցնողը՝ զարդարանքը, զրոսանքը, ընդունելութիւնները։ Երկուսն էլ նոյն բաներն են, կեանքի նոյն դատարկութիւնը, լուրջ գաղափարական բովանդակութեան բացակայութիւնը։ Ոչ, ես այլ ես այսպէս ապրել չեմ կարսող։ Ի զուր աեղը չէ, որ ես խոստում արի։ Քրիստոս տանշուեց մեղ համար, ինձ համար։ Ես պարտաւոր եմ զոհաբերութիւն անելու, յանուն նորա մի գործ կատարելու։

Հռաքէլը շտապով հանեց ձեռնոցները, կօֆտան ու

գլխարկը և հաստատում քայլերով ներս մտաւ մօր սե-  
նեակը։ Նորա մայրը հասարակութեան մէջ աչքի ընկնող  
դիրք ունէր, որին շատ մեծ նշանակութիւն էր տալիս և  
ամեն ջանք գործ էր զնում իւր որդւոց յաջողութեան  
համար։ Նա գոհ էր իւր որդիներից և իրաւամբ պար-  
ծենում էր նրանցով։ Տղան մեծ յաջողութեամբ վերջա-  
ցնում էր զինուորական ճեմարանը, իսկ աղջիկը պատ-  
րաստում էր յաջողութեամբ բեմ դուրս գալու։ Հռաքէլը  
ասել էր նրան իւր խոստման մասին, որ արել էր մի ամ-  
բողջ խմբի հետ միասին, բայց նա դրան ոչ մի նշանա-  
կութիւն չէր տուել, համարելով այդ մի վաղանցուկ ոգե-  
ւորութիւն, որ ոչ մի կապ չունէր կեանքի սովորական  
ընթացքի հետ։

Այդ ըոպէին նա նստած մտածում էր առաջիկայում  
իւր աղջկայ բեմ դուրս գալու մասին, նախապէս հաւա-  
տացած լինելով նրա ունենալիք փայլուն յաջողութեանը։  
Նրա առաջ պատկերանում էին հասարակութեան ծափա-  
հարութիւնները, հիացմունքը, ծաղիկները, ընծաները,  
բոիլիանստները, փառքն ու դրամական վարձատրութիւնը։  
Աւստի և շատ աւելի մեծ եղաւ նորա զարմանքը, երբ  
աղջիկը ներս մտնելով՝ առաց,

—Մայրիկ, վճռեցի օպերայի վերատեսչին տալիք  
պատասխանիր, ես մերժում եմ նրա առաջարկութիւնը։

—Ի՞նչպէս, ի՞նչ, մերժում, ինչո՞ւ։

—Ես չեմ կարող մտնել նրա խմբի մէջ։ Ես երբէք  
չպիտի երգեմ թատրոնում։

—Ի՞նչ ես ասում դու, —տարակուսած ասաց մայրը։  
Ի՞նչպէս թէ չպիտի երգես, խելքով գլխիդ է։ Հապա ի՞նչ  
պէտք է անես։

—Թէ ինչ պէտք է անեմ, այդ դեռ բոլորովին սրոշ  
չէ ինձ համար։ Պէտք է լուրջ մտածել այդ մասին։ Մի-  
այն այսքան գիտեմ, որ բեմ դուրս չեմ դայ։

—Բայց ի՞նչ է պատճառը, ասա՞ նարունակ կրկնում  
ես, «չեմ ուզում, բեմ չեմ դուրս դայ»։ Բեմը քեզ ի՞նչ  
է արել։

— Բեմը ինձ ոչինչ չի արել, ես այդ չեմ համարում մի կոպիտ կամ վատ բան, ես միայն մտածում եմ, որ պարտաւոր եմ Աստուծոյ ինձ տուած տաղանդը լուրջ գործի ծառայեցնել, մի աւելի բարձր գործ կատարել:

— Մայրը զայրացած նայում էր աղջկան, իսկ Հռաքէլը շարունակում էր.

— Գիտէք, մենք խոստում ենք արել մի տարուայ ընթացքում այնպէս կազմակերպելու մեր կեանքը և ուղղելու մեր գործունէութիւնը, որ համարձակ կարելի լինէր ասել. «Այդ հաճելի կը լինէր Քրիստոսին»: Ես հաւատացած եմ, որ Քրիստոս թոյլ չէր տայ իմ յիրաւի հազուադիւտ ձայնը թատրոնին նուիրելու: Մարդիկ գնում են թատրոն հանգստանալու, բաւականութիւն ստանալու, զուարճանալու: Ես կը ցանկայի նուիրելու իմ ուժերը աւելի պատասխանառու և աւելի կարեօր գործի. ոչ թէ ամբոխի բաւականութեան, այլ մարդկանց փրկութեան, հասարակութեան հոգեւոր բարեփոխման գործին:

Մայրիկ, մայրիկ, մտածիր, որքան սարսափելի է մեզ շրջապատող կեանքը: Նորերս երկու գիրք կարդացի. մէկը՝ Ստէնլի «Աֆրիկայի խորքերում», միւսը՝ Բուտսի «Լոնդոնի խորքերում» վերնագրով: Մարմնովս սարսուռ անցաւ: Ստէնլի նկարագրում է կենտրոնական Աֆրիկայում տեղի ունեցող բարբարոսութեան արհաւիրքները. ամբողջ ցեղերի ոչնչացումը, սարսափելի ստրկութիւնը և նողկալի մարդակերութիւնը: Բուտս ասում է, «Մարդկային վայրենութիւնից սարսելու համար շպէաք է Աֆրիկայի խորքերը գնալ: Անգլիացիք հէնց իրենց Լոնդոնում ունին ամբողջ թաղեր, որտեղ բարարոսութեան աւելի սոսկալի երկոյթներ են տեղի ունենում, որտեղ մարդիկ դարձել են ոչ միայն անասուններ, այլ, թւում է թէ, աւելի ստոր քան անասունները»: Ապա նա պայծառ կենդանի պատկերներով նկարագրում է հարիւր հաղարաւոր մարդկանց այնպէս երեսի վրայ թողնուած լինելը, նրանց աղքատութիւնը, բարյական անկումը, որ դժուար է լինում հաւատալ, թէ այդ ամէնը կարող էր տեղի ունենալ քրիստոնէական

քաղաքներում, լորդերի և պէրերի շքեղ ազարանկների մօտ, գեղարուեստական սրահների բիւրեղեայ պալատների, շլացուցիչ շքեղութեամբ փայլող թատրոնական դահլիճների և վերջապէս հոյակապ տաճարների կողքին։ Այդ թշուառ աղքատների թաղերում այնպիսի սոսկալի դէպքեր հն տեղի ունենում, որ Դանտէի դժոխքի պատկերները նսեմանում են նրանց առաջ, Բայց չէ որ այդքուար հարիւր հազարաւոր վայրենացած արարածները մարդիկ են, Աստուծոյ պատկերի նմանութեամբ սեղծուած՝ կենդանի հոդիներ։ Մարսափելի է ասելը, մեր միլլիոնաւոր բնակչութեամբ քաղաքների խուլ անկիւնների մութ նկուղներում ծնւում, ապրում և կենդանուոյն քայքայում են արքեցութեան, չքաւորութեան և անառակութեան մէջ մեր մերձաւորները, մեր խնամքին յանձնուած մեր եղբայրներն ու քոյրերը, իսկ մենք մոռանալով նրանց և երբէք չմտածելով նրանց համար, հաւաքւում ենք պայծառ լուսաւորուած դահլիճներում, զուարճանում ենք երաժշուութեամբ ու երգեցողութեամբ, հիանում ենք դեկորացիաների մոդական գեղեցկութեամբ, իսկ մեր կողքին, մի քանի փողոց այն կողմը, ինչպէս սանդարամետից, լաւում է անվերջ լաց և ատամների կրծտոց։ Սա մի սարսափելի, մինչև երկինք բաղոքող կենդանի պատկեր է նման աւետարանի «Մեծատան ու Ղաղարոսի» առակին։ Մէկը հագնում էր բեհեղ ու ծիրանի և շարունակ առատապէս ուրախանում էր, միւսը ցնցոտիներով պատած, վիրաւոր ընկած էր նրա գուանը և սպասում էր ճոխ սեղանից ձգած փշրանքներով յագեցնելու իւր քաղցը, մի միայն շներն էին գալիս աղքատի մօտ և լիզում նրա վէրքերը։ Ես կամենում եմ օրեւէ կերպով մեր այդ երեսի վրայ ձգուած, թշուառ եղբայրների հոգու վէրքերը մաքրել, իսկ բեհեղ ու ծիրանի հագնող, կոշտ և ինքնագոհ հարուստի մօտ գնալ և երգել՝ նրան զուարճացնելու համար, մոռանալով Ղաղարոսին, գորա համար փող վերցնել, ծաղիկներ ու բրիլիանտներ ստանալ, ես չեմ կարող, չէ, չեմ կարող։

—Այնուամենայնիւ ես չեմ հասկանում, թէ ինչու դու չես կարող երգել բեմի վրայ, —ասաց մայրը: —Միթէ դու թատրոնը, երաժշտութիւնը և երգեցողութիւնը մեղք բան ես համարում:

—Այս, մայրիկ, դու չես ուզում ինձ հասկանալ: Ես ոչ ոքի չեմ դատում, ոչ ոքի չեմ մեղադրում: Ես վճռում եմ միմիայն ինձ համար, ընտրութիւն եմ անում իմ տաղանդի համար: Թող լինին թատրոններ ու համերգներ, թող մարդիկ այնտեղ հոգով հանգստանան ու զուարծանան, և ցանկացողները թող ծառայեն նրանց իրենց տաղանդով: Ես այդ բոլորը թանգ եմ վնահատում: Գեղարդուեստը երկնքի պայծառ շողն է երկրի վրայ: Նա զարթեցնում է մարդկանց մէջ մաքուր, սուրբ զգացմունքներ, բերում է իւր հետ հազուագիւտ պայծառ րոպէներ, թող նա աճի երկրի վրայ: Եւ բախտաւոր են նրանք, որոնց վիճակուած է գեղարդուեստից: Ասկայն չեմ ուզում ծառայել նրան թատրոնի բեմի միջոցով: Այդ ծառայութեան համար առանց ինձ ես շատ տաղանդներ կը լինեն միշտ: Իմ ձայնի և շնորհքի համար ես ուրիշ գործածութիւն եմ որոնում: Փրկիչը իւր աշակերտներին, նրանց առաքելութեան առաջին ժամանակներում, ասաց, «Գնացէք ձեր ժողովրդի կորած ոչխարների մօտ, հիւանդներին բժշկեցէք, բորոտներին որբեցէք և մեռելներին յարութիւն տուէք: Ճրի առաք, ճրի էլ տուէք»: Այս խօսքերը ինձ ես վերաբերում են: Ես ես ուզում եմ առանց շահի ակնկալութեան ծառայել մարդկանց, և կարծում եմ, որ իմ երգով իջնելով մեր հիւանդ, բորոտ և հոգով մեռած եղբայրների նկուղները, կարող կը լինեմ գէթ մէկին կենացանացնել, սրբել, զգաստ և բանական կեանքի դարձնել: Հին յունական դիցաբանութիւնը ասում է, թէ Որփէոոը երաժշտութեամբ սաստում էր ծովի ալիքներին, հնազանգեցնում վայրենի գաղաններին: Ես ուզում եմ փորձել իմ տաղանդի միջոցով մեղմացնելու և աղնուացնելու գաղանացած մարդկանց: Ահա իմ՝ ինդիրը և հաստատուն

վճիռը։ Փրկիչն իւր անձը ամբողջովին տուեց մարդկանց փոխարէն։ Ես ուզում եմ Աստուծոյ օգնութեամբ որ և է բան արած լինել մեր փոքր եղբայրների փրկութեան համար։

—Այսինքն ի՞նչ ես ուզում անել, —հարցրեց նորից մայրը։ —Դու շատ խօսեցիր, բայց թէ ի՞նչ ես մտադիր անելու, դրա պատասխանը դարձեալ չտուիր։

—Ես ինքս գեռ որոշ չգիտեմ, թէ ի՞նչ պիտի անեմ։ Ես կուզենայի գնալ և երգել Ուզիդ Անկիւն կոչուած թաղում։

—Որտեղ, սարսափահար եղած ընդմիջեց մայրը։ —Ուզիդ Անկիւնում, Բայց գու գիտես, թէ ինչպիսի ժողովուրդ է ընակւում այնտեղ։ Նրանք գաղաններ են, և ոչ թէ մարդիկ, դա մի ճահիճ, մի դժոխք է։ Այստեղ իրենց համար ապաստան են հաստատել անառակութեան ու արբեցութեան ամեն տեսակ բոյներ։

—Հենց նրա համար էլ ես պարտաւոր եմ այնտեղ գնալ, որ մի դժոխք է, որ այնտեղ մարդիկ չեն ընակւում, այլ գաղաններ։ Այդ մի նախատինք է մեզ համար։ Մենք հաղարներ ենք զոհում յօգուտ առաքելութեան հեթանոսների մէջ, իսկ մեր կողքին, հարեւան թաղերում կորչում են հոգեոր խաւարի մէջ հաղարաւոր հոգւով վայրենիներ։

—Դա անմտութիւն է, —ընդհատեց նրան մայրը, վերկենալով և սենեակից դուրս գալով։ —Այդ բանի համար ես երբէք չեմ կարող տալ իմ համաձայնութիւնը։

—Ինձ համար այժմ ամենից գլխաւորն այն է, —հեղութեամբ պատասխանեց Հռաքէլը, որ Քրիստոս համաձայն լինի դրան։ իսկ նա, հաւատում եմ, կը համաձայնի իմ մտադրութեանը, և ես համոզուած եմ, մայրիկ, որ ժամանակով դու ես հաւանութիւն կը տաս։

Մայրը մսեց մինչև վերջը, դուռը խփեց և հեռացաւ։ Հռաքէլը հառաչեց ծանրապէս, մտորմունքի մէջ ընկաւ, և ապա հենց այնտեղ սենեակի մէջ տեղը ծունկ չոքեց։

— Սատուած, ոյժ տուր և սովորեցրու ինձ։  
Երբ նա վերկացաւ, նրա երեսը արտասուքից թաց  
էր եղել։ Նա գնաց իւր սենեակը, սեղանի վրայից վերցրեց  
աւետարանը և բաց անելով Մատթէոսի տասներորդ  
գլուխը, կարգաց. «Ով որ խոստովանի Ինձ մարդկանց  
առաջ, Ես ևս կը խոստովանեմ նրան իմ Երկնաւոր Հօր  
առաջ։ Եւ ով ուրանայ Ինձ մարդկանց առաջ, Ես ևս  
կ՛ուրանամ նրան իմ Երկնաւոր Հօր առաջ։ Մի համարէք,  
թէ եկայ խաղաղութիւն ձգելու երկրի վրայ. չեկայ խա-  
ղաղութիւն ձգելու, այլ սուր. Որովհետեւ եկայ բաժանե-  
լու որդուն իւր հօրից, և աղջկան՝ իւր մօրից, և հարսին՝  
իւր սկեսուրից։ Եւ մարդու թշնամին իւր ընտանիքն է։  
Ով սիրում է իւր հօրը կամ մօրն աւելի քան ինձ, ար-  
ժանի չէ ինձ. և ով սիրում է իւր տղային կամ աղջկան  
աւելի քան ինձ, արժանի չէ ինձ, Եւ ով չի վերցնում  
իւր խաղը և գալիս իմ յետենից, արժանի չէ ինձ։

Հռաքէլը կարգաց այս խօսքերը, գիրքը ծնկերի վրայ  
դրեց և խոր մտածմունքի մէջ ընկաւ։

— Այս, մարդու թշնամին իւր ընտանիքն է. Քրիս-  
տոս կանչում է քեզ դէպի մի կողմ, մօտիկ մարդիկ՝ դէպի  
ուրիշ կողմ. Դու ուզում ես բարձրանալ դէպի վեր, նրանք  
քաշում են քեզ դէպի վայր. Պէտք է ընտրել երկուսից  
մէկը. կամ հրաժարուել Քրիստոսից և հնազանդուել տա-  
նեցւոց ու նրանց երկրաւոր շահասիրական հաշիւներին.  
կամ ամենից բարձր դասել Քրիստոսի գործը և արիւնա-  
կից մերձաւորների բարկութիւնը շարժել։ Ես խօսք եմ  
տալիս հետեւելու Քրիստոսին և կը գնամ նրա շաւզով։  
Հռաքէլը նորից ծունկ չաքեց. «Ճէր, ինձ ոյժ տուր և զօ-  
րացրու, օգնիր ինձ արժանի լինելու Քո ծառայութեանը»։

Հետեւալ կիւրակի պատարագից և քարոզից յետոյ  
խմբի անդամները, ըստ սովորականին, հաւաքուեցան  
գրադարանի սենեակը. Աւելացել էին մի քանի նոր ան-  
դամներ. Սենեակը լիքն էր. Շատերը հազուագիւտ ոգե-  
ւորութեամբ հաղորդում էին միմեանց իրենց ծրագիրների  
մասին։ Ամէնքը դում էին մի ինչ որ առանձին հոգու

վեհութիւն, ուժի և եռանդի զեղումն Քրիստոսի կենդանի գործի համար։ Արանց հոգիները թարմացել էին, սրտերը ջերմացել։ բարի գործի ցանկութեամբ լցուել Խորհրդածում էին որ և է ընդհանուր գործի հնարաւորութեան մասին՝ յօդուա իրենց մերձաւոր, փոքր, խաւար եղբայրների։

Այդադեղ գանօւսզ միստել Գրէյլ առաջարկեց խմբի անդամներին մասնակցելու «Սպիտակ Խաչի» ընկերութեան աշխատանքներին։

— Դուք գիտէք, ասաց Գրէյ, որ ես այդ ընկերութեան անդամ եմ։ Նա կազմակերպուած է «Կարմիր Խաչի» ընկերութեան օրինակով, միմիայն «Կարմիր Խաչի» ընկերութեան նպատակն է պատերազմում ընկած հիւանդներին և վիրաւորներին օգնել, իսկ «Սպիտակ Խաչի» ընկերութեան նպատակն է՝ խաղաղ ժամանակ պատերազմուել ամեն տեսակ հաստրակական ցաւերի՝ աղքատութեան, ստորին գասակարգի խաւարի, կապութեան, արքեցութեան և այլ արատների դէմ։ Առ այժմ ընկերութիւնը շատ գործ չի կարողանում կատարել. նու դեռ չունի բաւականաչափ միջոց և մարդիկ սակայն առաջարկում նա կարող է աճել և մեր այս նոր խումբը կարող էր շատ օգտակար լինել «Սպիտակ Խաչի» ընկերութեան համար։ Այսանդ մեր մէջ կան բժիշկներ, իրաւաբաններ, երգչուհիներ, ընթերցանութեամբ պարապելու ընդունակ մարդիկ. կայ, վերջապէս, և այդ ամենից գլխաւորն է, լաւ քարողիչ։ Եւ ես առաջարկում եմ ամէնքին՝ միացեալ ուժով գործի կազել «Սպիտակ Խաչի» դրօշակի տակ։ Մեր առաջ դրուած է շատ կենդանի աշխատանք։ «Սպիտակ Խաչը» վճռել է հաստատուել Ուղիղ Անկիւնում։ Դուք, ի հարկէ, գիտէք, թէ ինչ բան է Ուղիղ Անկիւնը։ Դա քաղաքի մի ծայրն է, տմբողջ մի թաղ մի փոքրիկ քաղաքի մեծութեամբ։ Այսանդ աղքատութիւնը և նրա ուղեկից արքեցութիւնն ու ամեն տեսակ արատները իրենց համար հաստատուն բռն են դրել. Գնանք այնաղեղ։ Մարդոյ նրդին եկաւ որոնելու և վիրկելու կորածին։

Գնանք նորա շաւղով, սփռենք Քրիստոսի լոյսը մուժ  
նկուղներում։ Պատոր Մէկոուէլ կը խօսէ այդ երեսի վրայ  
ձգուած թշուառներին Աստուծոյ և նորա արդարութեան  
մասին։ Օրիորդ Վինսլոու իւր հրաշալի ձայնով բարերար  
ազգեցութիւն կանէ նրանց կոպտացած և նեղացած հո-  
գու վրայ։ Բժիշկներն ու բարի աղջիկները կօգնեն հի-  
ւանդներին դեղերով և քնքոյշ հոգացողութեամբ, որպէս  
գթութեան քոյրեր։ Գիտութեան տեղեակները իրենց  
վրայ կառնեն ընթերցանութեան գործը զանազան խըն-  
դիրների մասին, որոնք կարող են հետաքրքրել Ուղիղ  
Սնկիւնի լաւագոյն ընակիշներին։ Իրաւաբանները ձրի  
կերպով խորհուրդներ կըտան փաստաբանի կարիք ունե-  
ցողներին։ Մենք այնաեղ բաց կանենք դպրոց երեխաների  
համար և օգտակար զուարճութեանց տեղի հասակաւոր-  
ների համար, և ապաստարան թշուառների ու նեղեալ-  
ների համար։ Ուղիղ Սնկիւնի կարիքների ու արատների  
խաւարապատ ծովում մենք կը վառենք լուսատու փարոս։  
Ես կարծում եմ, —վերջացրեց Գրէյ, —այդ «Փարոսը»  
մի այնպիսի գործ է, որ կարող է մեզ ամենքիս միացնել  
յանուն Քրիստոսի մի ընդհանուր գործի։

Ամէնքը հիացած հաւանութիւն տուին այդ առա-  
ջարկութեանը.

—Այն, այն, «Փարոս», դա ամենից յարմարը կը լինի։  
Յիսուս Քրիստոս գնում էր ամենից աւելի ընկած մեղա-  
ւորների մօտ և նրանց կանչում դէպի Աստուած, դէպի  
երկնաւոր Հայրը, դէպի սիրոյ ու արդարութեան թագա-  
ւորութիւնը։ Մենք կը գնանք նորա շաւղով, կը գնանք  
երեսի վրայ ձգուած թշուառների մօտ։

Մէկոուէլի դէմքը փայլում էր ամենամաքուր ուրա-  
խութեամբ։ Նա ասաց.

—Այդ Աստուծոյ կրակն է, որ վառւում է այս-  
տեղ, Դրանով փարոսը պայծառ լոյս կը տայ խաւարի մէջ  
ընակուղներին։ Մեր առաջ դրուած գործը մեծ է։ Նա  
շատ ոյժ է պահանջում։ Խորհեցէք, թէ ով ինչ բանով  
կարող է օգտակար լինել այդ գործում և եկող կիւրակի

յայտնեցէք ձեր վճիռը։ Մենք մի շաբթից յետոյ դարձեալ կը հաւաքուենք այստեղ և վերջնականապէս կ'որոշենք, թէ ով ինչ պիտի անէ։ Իսկ այժմ աղօթենք, որ Աստուած հաստատէ մեր նոր բարի մտադրութիւնը և ոյժ տայ իրագործելու այն։

Աղօթքից յետոյ ամէնքն ուրախ ու զուարթ սկսեցին ցրուել իրենց տները։

Վերջինիա Պէջը ճանապարհին ասում էր Հռաքէլին։

— Ես զգում եմ այնպիսի ուրախութիւն, ինչպէս Քրիստափոր Կոլումբը, երբ նա ծովի վրայ երկար թափառելուց յետոյ, յանկարծ լսեց. «Ա՛փ, ափ»։ Այնպէս և ես Դատարկ ու աննպատակ կեանքի երկար տարիներից յետոյ յանկարծ լսում եմ. «Գործ, կենդանի, բարի, սուրբ գործ»։

— Իսկ ես, — ասում էր Ժպտալով Հռաքէլը, — ես զուարճանում եմ արդէն հեռուից յանկարծ երեցած այդ երկրի գեղեցկութեամբ, զգում եմ ծաղիկների բոյրը. այժմեանից հրճուում եմ գործի հրապոյրով։ Երբէք այս չափ հօգեկան ուրախութիւն չեմ ունեցել։

Նոյնն էին զգում նաև խմբի միւս անդամները։ Ամէնքի մէջ կեանքի վսեմ խորհուրդ, աշխատանքի ծարաւ և գործի յաջողութեան պայծառ հաւատ էր ծագել։ Փարոսը լուսաւորել էր ամենքին մի նոր, կենդանի և չերմ սիրոյ լուսով։

Ոռւս. թարդմ. Մամբեկ վարդապետ։

(Շարունակելի)։

